**ՕՐԱԿԱՐԳ**

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝**
**2024 թվականի մայիսի 22-ի, ժամը 14:00-ի նիստի**

1. **Կառավարման ֆակուլտետի դեկանի հաշվետվության մասին:**
   Զեկուցող՝ կառավարման ֆակուլտետի դեկան **Մ.Է.Մովսիսյան**:

2. **Պրոֆեսորի թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին** («Առավոտ» օրաթերթ, 15.03.2024, N 047):
   Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ **Ա.Ա.Մկրտչյան**:

   1) **Կառավարման ամբիոն**
   **Խորեն Ալբերտի Մխիթարյան՝** տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր:

   2) **Բիզնես վարչարարության ամբիոն**
   **Անահիտ Սերգեյի Մելքումյան՝** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

   3) **Հասարակագիտության ամբիոն**
   **Նազելի Գառնիկի Սուքիասյան՝** իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

   Հավակնորդների գործերը քննարկվել և երաշխավորվել են գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 30-ի, ժամը 15:00-ի նիստում (արձանագրություն N 4):

3. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 2024-2025 ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգը հաստատելու մասին:**
   Զեկուցող՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Վ.Գրիգորյան**:

4. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 1-ի նիստում (արձանագրություն N 3) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի աշխատակարգում» փոփոխություններ կատարելու մասին:**
   Զեկուցող՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Վ.Գրիգորյան**:

5. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2019 թվականի ապրիլի 30-ի նիստում (արձանագրություն N 11) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի աշխատակարգում» փոփոխություն կատարելու մասին:**

   Զեկուցող՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Վ.Գրիգորյան**:

6. **Որակի ապահովման բաժնի, կարիերայի կենտրոնի և ուսանողական խորհրդի հարցումների արդյունքների մասին**:

   Զեկուցողներ՝ որակի ապահովման բաժնի պետ **Կ.Հ.Գրիգորյան,** կարիերայի կենտրոնի պետ **Տ.Գ.Վարդանյան** և «Տեղեկատվական համակարգեր» կրթական ծրագրի բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի ուսանող **Ի.Մ.Մարտիրոսյան**:

7. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին ներկայացվող **«Բնակչության կենսամակարդակի վրա տնտեսության թվային փոխակերպման և տեխնոլոգիական արդիականացման ազդեցությունների գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով (խմբի ղեկավար՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» գիտաուսումնական լաբորատորիայի ղեկավար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ատոմ Շավարշի Մարգարյան**) հայտը երաշխավորելու մասին:

   Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

   Հայտը քննարկվել և երաշխավորվել է գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 21-ի, ժամը 17:00-ի առցանց նիստում (արձանագրություն N 5):

8. **Ընթացիկ հարցեր:**

   1) **2024-2025 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ բակալավրի ընդունելության հայտագրման արդյունքների մասին**:

      Զեկուցող՝ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար **Գ.Ա.Նազարյան**:

2) **Scopus և Web of Science գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրապարակումների մասին:**

Զեկուցող՝ գիտության բաժնի պետ **Տ.Ս.Մարտիրոսյան**:

3) **«Ադրբեջանի պետական կառավարման և տնտեսական համակարգերի ամփոփ համապատկերը» մենագրության հրատարակությունը երաշխավորելու մասին** (հրատարակության է ներկայացրել «Ամբերդ» հետազոտական կենտրոնը):

Մենագրությունը երաշխավորվել է հրատարակության գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 21-ի, ժամը 17:00-ի առցանց նիստում (արձանագրություն N 5):

**Գիտական քարտուղար՝** **Ն. Հ. Դարբինյան**

2024 թ. մայիսի 22
Երևան